

սում են նորա նեղութիւնները, նորա զուար-
ճութիւնները առաւել անհիմն են նորա ձանձրու-
թիւնից:

ԳՐԵԳՐ ՏԷՐ ՄԵԼԵԵԴԵԼԵԱՆ

ՄԻԻԹԱՐՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻՑ.

Կրօնք համընթացող կացութեանն զամենայն հա-
սակ մարդկութեան ի նեղութիւնս, ի հալածանս, ի
քաղց, ի ծարաւ, ի մի բան՝ ի բազմալիցութիւն ալիս
ծովու կենցաղէս: Միտիմարեն նորա զհանուր մարդ-
կութեան զտարաբազկի մեացորդ և զշուտա-
կան յարտասուելի վիճակն իւրեանց. և յորժամ
յամենից իսկ բարեաց պատճառանաց թափա-
ցալք և ի քաղց և ի ծարաւ վիճակաւք յԱնե-
ղին յաւիտենական կամաց՝ ստիպին ծնուցանել
յակամայս զարտասուս յաշտ իւրեանց, յորժամ
անագորոյն մարդկութեան շլուկչն զաղի և ո-
ղորմ՝ կական նոցա արարեալ սրանայ թարչի ի
տունս մեծածախ խնայից հանգիսի, կրօնք են
զարձեալ, որ միտիմարեն զնոսա յանտանելի վիշտս
իւրեանց, և և ի յերկիրն տապալել զնոսին անա-
չառելին մահուան, յորժամ տայ նոցին ժամա-
նակս կենաց ի պանդխտութեանս վայրի ոչ առա-
ւել քան զքանի ինչ վայրկեան ժամու, յայն-
ժամ ևս, ահ, կրօնն թեւատարած բաղկօք ի
գիրկս առեալ զնոսին ուրախութեամբ ընդունի,
և առաջի նոցա, իրր ընդ հայելի օրինակաւ,
առնելով զմշտնջենականութիւն յաւիտենական
փառահեղ տեսարանին, զոգցես տայ զգալ՝ զոր
վայրկեղոյն իցեն ընդ զարս յաւիտենականութեան
զքաղցրագոյնն ճաշակ մշտնջենաւոր երջանկու-
թեանս: Լիցի՞ ձեզ աստքէն, ո՞ր մահականացուք,
յիտ հանգստեան տաժանաւոր ձեր ճգանց, ժամ
մի զկայ առնուլ յամենայն աւուր՝ խոկալ ըստ
Պատկալեայ ճշմարտութեան բանի ի յառանձ-
նութեան զանձանց ձերոց զզոյութենէ, զտանել
զանհերք՝ իստ ճշմարտութիւն. և թէ աւուրք հա-
մառօտ տուն մարդոյ առ հանդիմանութիւն
վասն ճանապարհին առաջնորդելոյ յերկնաւոր
կայան արդարոց, և չիք հաստատութիւն յայսմ
պանդխտութեան վայրի, ալ ամենայնքն երազ և
ստուերք արագապաց

ԳՐԵԳՐ ՏԷՐ ՄԵԼԵԵԴԵԼԵԱՆ

ՔԱՀԱՆԱԳԻՑ ԵՒ ԺՈՂՈՎՐԴՈՅ

ՓՈԽԱԳԱՐՁ ՊԱՐՏԱՆՈՐՈՒԹԻՒՆՔ

«Որ քաղց և ծարաւ և զանազան
բեկանք, իրեն պարտաւորութեան
եղանակն . . . և քաղց և ծարաւ
և քաղց և ծարաւ:

(ՏԷՐ ԱՐՄ. Ե. 47—48):

1) Հայկական եկեղեցւոյ քահանայն օրինաւոր
ապէս կ'ընտրուի մի և նոյն քաղաքի կամ գիւղի
ժողովուրդից. ուստի քահանայն իւր նուիրական
պաշտօնի պարտաւորութիւնը ճանաչելով՝ եկեղեց-
ւոյ սրբազան խորհուրդները անմեղի կերպով կա-
տարէ, որպէս զի կրկին պատուոյ արժանի համա-
րուի. ըստ այնմ թէ՛ «Որ բարեք վերակացու լի-
նին երկիցունք, կրկին պատուոյ արժանի եղիցին»:

2) Իսկ ժողովուրդը յօժարակամ սիրով քա-
հանայի նիւթական կառավարութեան համար հո-
գըս քաշէ, և չը թողու նորան որ և իցէ կարօ-
տութեան, և նեղութեան մէջ հեծէ և տառապի.
հետեւաբար և պարտաւորի հոռանալ ժողովուրդե-
նից. «Զի արժանի է մշակն վարձու իւրոյ», և հա-
պայ է փոխադարձ պարտաւորութիւնք քահանա-
ւոյն՝ առ ժողովուրդն, և ժողովուրդան՝ առ քա-
հանայս:

3) Այս ժողովուրդն է քահանային իրր հոգե-
ւոր հարազատ որդի. իսկ քահանայն՝ իրր խնա-
մածու հայր, և ժողովուրդան զաւակաց դաստիա-
րակ, և ուսուցիչ, կրթիչ և մարդիկ նոցա Աստու-
ածապաշտութեան, բարոյականութեան սկզբունք-
ներով:

4) Ժողովուրդն է իրր հովուածէր ոչխար, իսկ
նորա անձնագիր հովիւ կը համարուի քահանայն.
որ Ս. Աւետարանի դալարագեղ արօսների վրայ
ճարակեցնելով՝ հոգեորապէս անուցանէ, և ոչխա-
րագլխատ յախշտակող գայլերից պահպանելով՝ Ս.
Արքայութեան փառաբեր մտքներու ծանոթակէ:

5) Ժողովուրդան միտքն է իրր ամուլ անդաս-
տան. որոյ մէջը Ս. Աւետարանի բարի սերմութիւնք
ցանող հոգեւոր մշակն է քահանայն, որ մշակէ
նոցա զանազան տեսակ առաքինութեան պարա-
տութիւններով, պահպանելով չար որոմեացանե-

րիցը՝ Ս. Արքայութեան շտեմարանի մէջը ժողովելու զուտ և մաքուր ցորեան պատրաստէ:

6) Ժողովուրդն է իրրե նորատունկ ծառ՝ տնկուած Ս. Եկեղեցւոյ պողատու այգւոյ մէջը. նորա հաւատարիմ՝ այգեպանն է քահանայն. որ պահպանելով նոցա վնասակար ճճիներիցը, և դարմանէ անձնուիրարար, և վերջապէս Ս. Արքայութեան համար արժանաւոր համեղաճաշակ պտուղներ պատրաստէ:

7) Ժողովուրդը հոգեորապէս ենթարկուած կը լինի բազմատեսակ հիւանդութեանց. նոցա հոգեոր բժիշկն է քահանայն, որ խոհեմութեամբ զննէ նոցա հոգւոյ բազկերակը, և մատուցանէ նոցա Ս. Աւետարանի ասպարիւնիչ դեղեր և պահպանէ որ և իցէ հոգւոյ առողջութեան վնասակար կերակուրներինցը, որպէս զի կարողանայ նոցա առողջ հոգւով ներկայացնել Երկնաւոր Թագաւորին:

8) Ժողովուրդը հոգեորապէս կը թափառի տրդիտութեան խաւարի մէջը. նոցա լուսատու ճրագըն է քահանայն, որ կը դրուի Ս. Եկեղեցւոյ բարձր աշտանակի վրայ, Ս. Աւետարանի վարդապետութեան լուսովը նոցա մտաց խաւարը փարատելու, և նոցա որդիս լուսոյ, և որդիս տունջեան պատրաստելու:

9) Ժողովուրդն է իրրե եփուած կերակուր. նոցա համեմիչ աղն է քահանայն, որ իւր համեղութեամբ որ և իցէ կերակուրի մէջ զձուելով՝ ակորժահամ կ'առնէ Ս. Արքայութեան մէջ մշտնելու:

10) Ժողովուրդն է իրրե կենցաղոյս ծովու մէջ գտնուած ձկներ. իսկ ձկնորան է քահանայն, որ Ս. Աւետարանի ուղեկանի մէջ ըմբռնելով նոցա՝ Ս. Արքայութեան ժառանգորդ հանդիսացնէ:

11) Ժողովուրդն է իրրե տարակուսեալ ի վերայ երկուց ճանապարհաց. նոցա արիասիրտ առաջնորդն է քահանայն, որ Ս. Աւետարանի նեղ, և անձուկ ճանապարհով առաջնորդէ նոցա գէպ ի կիսանս յախտնից:

12) Ժողովուրդը նման է ծովածուի աշխարհիս մէջ՝ ալեկոծեալ նաւի. նորա ճարտար ղեկավարն է քահանայն. որ արթնութեամբ, և խոհեմութեամբ Ս. Աւետարանի կողմնացուցով կ'առաջարկելով՝ առանց որ և իցէ վտանգի կարողանայ Ս. Արքայութեան նաւահանգիստ հասցնելու:

13) Ժողովուրդն է եկեղեցի զինուորեալ. նոցա քաջ և արիասիրտ զօրապետն է քահանայն. որ վայելչապէս սպառազինած՝ իրան հնազանդ զինուորիցը գլուխ կանգնելով՝ սոցա հետ ի միասին, կորովութեամբ պատերազմին մարմնոյ, աշխարհի, և սատանայի դէմը, և արիւթութեամբ յաղթեն. որպէս զի ընդունին երկնաւոր Թագաւորիցը՝ ինքըն և իւր ժողովուրդը յաղթական մրցանակներ:

14) Վերջապէս ժողովրդեան առջևը դրուած գտնուի քահանայն իրրե պարզ և անպղտոր հայելի, պարկեշտ, բարեխիտ, անոխակալ, խաղաղասէր, և ամենայն առաքինութեամբ դարգարուած գործքերով՝ բարի օրինակ հանդիսանայ իւր ժողովրդեան. զի նոքա գործնական օրինակով աւելի կը համոզուին՝ քան թէ խրատներով (*), որպէս զի ի հանգերձելումն համարձակութիւն ունենայ ներկայացնել իրան խնամոց յանձնուած ժողովուրդը՝ երկնաւոր Թագաւորին, և ասել վստահութեամբ թէ, «Ահա ես և մանկունք իմ, և լսել մեր Կենտարար Փրկիչը այս քաղցր հրաւիրանաց ձայնը. «Որովհետեւ ի փորագ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մնա յուրախութիւն Տեառն քո, ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ, և այնուհետեւ ժողովրդեան հետն ի միասին կ'արժանանան երկնային փառացն:

15) Որովհետեւ իրաւունք ունի հովիւը՝ իւր պահպանած խաչների կաթնիցը կերակրուելու, երկրագործը՝ իւր սերմանած ցորեններիցը հաց շինելու, այգեպանը՝ իւր դարմանած այգւոյ պտուղներիցը ճաշակելու, բժիշկը՝ իւր առողջացրած հիւանդների նուէրքներիցն օգտելու, ճրագը՝ իւր մէջը լցուած իւղից վառուելու, ձկնորսը իւր ըմբռնած ձկներիցը վայելելու, ղեկավարը իւր աշխատանաց վարձքն ընդունելու, և ամենքը իրանց վաստակոց համաձայն շահվում են. ապա քահանայն՝ որ հոգեորապէս սերմանում է:

(*) Այսպիսի գործնական օրինակների պարտաւորութիւնը կը վերաբերին ոչնէ միայն քահանայից, այլ և ուսուցչաց, առ աշակիրտս, իշխանաց, առ հասարակութիւն, ծնօգաց, առ որդիս, և հետեւաբար ամեն զկուսութեաց, առ ստորագրեալս:

մարմնաւորապէս և հնձելու իրաւունք չունենայ միմէ*):

16) Բայց զժրողդարար մեր Հայոց ազգի քահանայից ոմանք՝ չբաւականանալով ժողովրդեան օրինակաւորութեան արդիւնքով կամ նուէրքով՝ ծանր պարտուց ներքեւ ճնշուած՝ լծող են անուամբ ժողովուրդն առանց հոգեւոր մխիթարութեան, լծախառում են յերկրէ յերկիր իրրեւ մուրացկան՝ ողորմութիւն հաւաքելու, ի նախատինս իւրանց քահանայական աստիճանին, և յանպատուութիւն իրանց ընտրող ժողովրդոց. ուրեմն պարտաւոր է ժողովուրդը՝ հոգալ իւր քահանայի նիւթական կարեւոր պահպանութիւնները, և պատրաստել նորա համար լաւ ապրուստ՝ զոնեա միջակ ժողովրդեան տան չափ միջոց ունենայ՝ իւր զերդաստանը կառավարելու անկարօտ կերպով:

17) Եթէ ցանկանում է ժողովուրդը մի լաւ գոհացուցիչ միջակ պատրաստել իւր անձնանուէր քահանային, ամեն մէկը իւր երկրի հանգամանաց համաձայն՝ չափաւոր ոռոգիչ օրոշէ նորան, որպէս զի անկարօտ և անտրտուն չկերպով կառավարէ իրան ընտանիքը, և ինքն էլ սուրբ եկեղեցւոյ որեւիցէ սրբազան խորհուրդները ձրիապէս կատարէ, և ամեն ժամանակ երկու կողմիցն էլ անբաւականութիւններ չը ծագին, և զուր տեղից չը բամբասուին ամեն տեղ և ամեն պլակրոն ազգաց առջևը, թէ ժողովուրդը, և թէ քահանայն, ի նախատինս Հայազգութեան անուան, և այս ոռոգիչը՝ կարող է ամեն մարդ իւր կարողութեան չափ ստորագրուիլ արքունական տուրքի նման, իբր մի հոգեւոր տուրք, և տարուէ տարի ինքնայոժար կերպով վճարել մի հաւատարիմ գանձապետի ձեռնով**):

(*) Մեր ազգի քահանայք թէպէտ ըստ մեծի մասին կատարեալ քահանայապետութեան աստիճաններէն զուրկ են, բայց այսուհետեւ կարելի է որ նոր ուսումնարանները պատրաստեն շնորհիւ մեր վեհափառ Կաթողիկոսին:

(**) Հայաստանեայց եկեղեցւոյ կառավարութեան ողոյ հակառակ է այստիսի մի դրամիւն, մանաւանդ թաղում անդամ փորձը հաստատած է թէ, մեր ժողովրդեան վիճակը եւ բարոյական զարգացումն

18) Այս ամեն խօսուածքներս իբրեւ մի կարեւոր առաջարկութիւն՝ կը ներկայացնեմ մեր Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ ջերմեռանդ հարազատ օրդոց, տարակոյս չունիմ որ ընդունելի համարուի. բայց այն տեսակ Եւրոպական լուսաւորեալ ձեւացող Հայ անուն մարդկանց հետ գործ չունիմք. զի նորա Կ. Եւսթ. Եւսթ. Եւսթ. իրանց վրայ ունենալն անգամ՝ նախատինք են համարում. կարգալով ուրիշ ազգաց անկրօն աղանդաւորաց թունալի և հոգեկոտորս զբերք՝ համարում են ինքը զինքները Արք. Եւսթ. Եւսթ. Եւսթ. և ին. և ին. աշակերտներ. իրանց իմաստաւորութեամբը ամեն որեւիցէ հոգեւոր պարտաւորութիւն բանի տեղ չեն համարում. Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ սրբազան խորհուրդները իրանց համար աւելորդ և ծանր սովորութիւն են համարում. երբեմն էլ եթէ պատահի մանեն յեկեղեցին՝ Եւրոպական պլակրոնի նման մեր եկեղեցւոյ կրօնական արտաքին նշանները իրանց վրայ երեցնել մեծ ամօթ են համարում. զորօրինակ դէմքը խաչակնքելը, ծուրը գնելը, սուրբ խաչը և սուրբ աւետարան համբուրել, սուրբ պատկերաց յարգութիւն տալը և ին. և հասարակօրէն հոգեւորականաց հետ անտարբեր կերպով են վարվում և երբեմն էլ խիստ անպատուութեամբ՝ և զրպարտում են սոցա անվայել ածականներով, և անպատիւ խօսքերով. որպէս զի նոցա նուիրական կոչումը նուաստացնեն, վարկն ու համարումը, խօսքերը, և ազգեցութիւնները պակսեցնեն պարզամիտ ժողովրդոց առջևը. և իրանք՝ իրանց սրտի բաղձանաց համաձայն՝ մեր սուրբ եկեղեցւոյ հայրապետադիր օրէնքները և հայրենական աւանդութիւնները տակնուվրայ անեն. և վատ որոմներ ցանեն սերմանուած բարի սերմանց մէջը, ինչպէս մի աւազակ երբ որ կամենայ ոչխար զողանալ, նախ հովուին կ'սպանէ, յետոյ ոչխարները կը յափշտակէ. երբ որ մի տուն կողոպտել

զեւ չնրեն տուրք անուելով որախի և իցէ տարեկան հոգեւոր պարտք բաժնաւ նորին ուսին վերայ, որ ի նախնեաց անտի ուսեալ է կամաւոր նուէրք տալ զաշտօնէից եկեղեցւոյ:

կամենայ՝ նախ տան տիրոջ ձեռները ու ռաները կը կաշկանդէ, յետոյ այն տան մէջը գտնուածներին հեշտ կերպով կը տիրէ:

19) Դիցուք թէ՝ դոքա նկատուած են մի եկեղեցականի վրայ անվայել և անկարգ ընթացք, որ մեղանշած լինի իւր նուիրական կոչման, կամ եկեղեցւոյ օրինաց դէմ. և այնպիսի մի յանցանք երբ որ ստուգուի մի եկեղեցականի վրայ, միթէ չի՞ կարող դատել՝ և դատապարտել մեր ազգային Հոգեւորական Բարձրագոյն Իշխանութիւնը. էլ ի՞նչ հարկաւորութիւն ունի այսպիսի զոտքան իմաստակների դատողութեան ենթարկուելու:

20) Ապա դառնանք կրկին մեր հաւատարիմ հարազատ, բարեպաշտօն, Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ աւանդապահ ժողովուրդոց հետը խօսելու, թող ամեն մարդ իմանայ որ՝ ինչպէս առանց ոչխարի հովիւ, և առանց հովուի ոչխար չի կարելի կառավարուիլ, նմանապէս և առանց քահանայի ժողովուրդ՝ չի կարելի. ուրեմն երկու կարգի անձինք իրար հետը սերտ յարաբերութեամբ կապուած՝ ջան ի գործ դնեն՝ Ազգն ընթացուցանել դէպ ի բարոյական յառաջադիմութիւն:

21) Վերջապէս քահանայն իւր նուիրական պարտաւորութիւններից յետ չը մնայ, իսկ ժողովուրդը՝ իւր քահանային պատուէ իբր հովեւոր հայր, և նորա նիւթական պակասութիւնները հոգալու փոյթ ունենայ. «զի արժանի է մշակն վարձու իւրոյ», և ի հանդերձելումն մեր Աննաբար Փրկչի հետեւեալ հրաւիրական ձայնին արժանանան, թէ եկեղեցականք, թէ ժողովուրդք, «եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք», և լին:

ՄԷՐՈՅ ԿՐԱՀԱՆԱՅ ՓԱՌԱՅԷԱՆՅ

Վ. ԱճԻՆԻ

Ա. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն

Ա. Զ. Դ.

Ի տեղեաց տեղեաց լուրք կը հասանին մեզ, թէ ի նպաստ Մայր Աթոռոյս շինութեանց ի կողմանէ Ազգայնոց մերոց եղած նուիրատուութիւնք ամբողջապէս չեն հասուցած հարկ եղած տեղը:

Ամաղրոյս միջոցաւ նուիրատուաց անուանց և նոցին նպաստից որքանութեան հրատարակութեան գլխաւոր նպատակներէն մինն այս է, զի մեր սիրելի Ազգայինք ընթեռնելով զայնս, եթէ իւրեանց տուած նուիրանաց չափ տպեալ է Արարատայ մէջ, ապահով լինին մատուցած նպաստից հասանելոյն ի Ա. Լ. Զմիածին, իսկ եթէ պակաս տեսանեն, փութան իմաց տալ:

Թէպէտե ևր դժուարանամք հաւատալ, և երբէք չեմք կարող ուրախանալ այնպիսի վատութեանց համար, բայց և այնպէս՝ մինչդեռ Մայր Աթոռոյս շինութեանց զրամական կարօտութիւնք խիստ մեծ, իսկ հաւաքեալ նպաստից արդիւնքը յոյժ սակաւ է, միևնոյն ժամանակ՝ նպաստներէն ևս յոմանց կողմանէ քաղելով առաւել ևս պակսեցնելը ոչ սակաւ վնաս տալ է Ա. Լ. Զմիածնի և Ազգիս, որ արդարեւ մեծ ցաւ կը պատճառէ ամենայն ազգասէր սրտից:

Ուստի կը խնդրեմք մեր սիրելի Ազգայիններէն, զի ով որ նուիրած նպաստին և ամաղրոյս հրատարակութեան քանակութեան մէջ պակասութիւն կը տեսնէ, ի սէր Մայր Աթոռոյս և Ազգիս՝ հաճի և